ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «02» 07 2026թ № 1953-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N 1084-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի ապրիլի 18-ի N 520-Լ որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման 2024-2029 թվականների» պետական աջակցության ծրագրի մասնակցության վերաբերյալ պայմանագրի ձևը հաստատելու մասին N 1084-Ա

հրամանով հաստատված պայմանագրի ձևում (այսուհետ՝ Պահմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Պայմանագրի վերնագրում և նախաբանում «2026» թիվը փոխարինել «2029» թվով.

2) Պայմանագրի նախաբանում «(այսուհետ՝ Ծրագիր)» բառերից հետո լրացնել «և տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության տվյալ տարվա պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին որոշումը,» բառերը.

3) Պայմանագրի 9.3-րդ կետում «ՀՀ» հապավումը հանել, «1-ին կետի» բառերը փոխարինել «1-ին մասի» բառերով, իսկ «4-րդ ենթակետի» բառերը փոխարինել «4-րդ կետի» բառերով:

2. Լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ սույն հրամանը ստորագրվելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում սույն հրամանը հրապարակել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջում:

2026-07-02 09:54:52 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԽԵՑԳԵՏՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2024-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ» ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան ___ _____202 թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար _____, ով գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____ (նշել անվանումը՝ _____) (այսուհետ՝ Շահառու), ի դեմս _____, ով գործում է ընկերության կանոնադրության/պետական գրանցման, (նշել գրանցման համարը) հիման վրա, (այսուհետ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի N 532-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման 2024-2029 թվականների ծրագիրը» (այսուհետ՝ Ծրագիր) և տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության տվյալ տարվա պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Շահառուն պարտավորվում է Ծրագրով սահմանված կարգով և ժամկետներում հիմնել _____(նշել համալիրի տիպը)_____ խեցգետնաբուծական համալիր, իսկ Նախարարությունը պարտավորվում է հիմնված _____(նշել համալիրի տիպը)_____ խեցգետնաբուծական համալիրի դիմաց տրամադրել Ծրագրով սահմանված փոխհատուցում:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. **Նախարարությունն իրավունք ունի՝**

2.1.1. Պայմանագիրը կնքելուց հետո ցանկացած ժամանակ իրականացնել մոնիթորինգ,

2.1.2. Մինչև փոխհատուցումը, իրականացնել տեղազննություն՝ սարքավորումները, անհրաժեշտ գույքը, խեցգետնադրման համար մատղաշ խեցգետնիկները և աճեցման համար մայրական կազմի առանձնյակները ստանալու, ինչպես նաև շինարարական մոնտաժային աշխատանքներն ավարտելու և համալիրը շահագործելու փաստերն ուսումնասիրելու նպատակով՝ կազմելով տեղազննության արձանագրություն,

2.1.3. Պայմանագիրը կնքելու պահից խեցգետնաբուծական համալիրն առավելագույնը մեկ տարվա ընթացքում շահագործման հանձնելու պարտավորությունը չկատարելու (նշված ժամանակահատվածում արտակարգ կամ ռազմական դրություն հայտարարվելու դեպքում, Նախարարության համաձայնությամբ, համալիրի շահագործման հանձնելու ժամկետը կարող է երկարաձգվել մինչև հինգ ամսով), ինչպես նաև սահմանված ժամկետում շահագործման չհանձնելու դեպքում չտրամադրել ծախսերի փոխհատուցում,

2.1.4. Պայմանագիրը միակողմանի լուծել, եթե այն կնքելուց հետո չորրորդ ամսում իրականացվող մոնիթորինգի արդյունքում արձանագրվի, որ շահառուի կողմից խեցգետնաբուծական համալիրի հիմնման գործնական աշխատանքներ չեն իրականացվել,

2.1.5. Պահանջել պայմանագրի դրույթները խախտելու դեպքում այն հայտնաբերելու պահից սկսած եռամսյա ժամկետում փոխհատուցման գումարները և ՀՀ Կենտրոնական Բանկի Խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 9-ի N 283-Ն որոշմամբ նախատեսված՝ այդ գումարի համար հաշվարկված տոկոսների արժեքը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ չվերադարձնելու դեպքում այն կգանձվի դատական կարգով:

2.2. **Նախարարությունը պարտավոր է՝**

2.2.1. Ծախսերի փոխհատուցումն իրականացնել դիմումատուի հաշվին գումարը փոխանցելու միջոցով: Խեցգետնաբուծական համալիրի ներդրումային ծախսերի՝

_____ դրամի 50 տոկոսի՝ _____ դրամի փոխհատուցումը (Ծրագրի 18-րդ կետով նախատեսված գումարի չափով) իրականացնել շահառուի կողմից մատակարարի տրամադրած սարքավորումները ստանալուց, ինչպես նաև շինարարական մոնտաժային աշխատանքներն ամբողջությամբ ավարտելուց և համալիրը շահագործման հանձնելուց հետո (մոնիթորինգի դրական արդյունքների հիման վրա), 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ Ծրագրի 27-րդ կետով նախատեսված տեղազննության արձանագրությունները ստորագրելու օրվանից սկսած:

2.3**. Շահառուն իրավունք ունի՝**

2.3.1. Նախարարությունից պահանջել փոխհատուցում՝ Ծրագրի 26-րդ կետով սահմանված կարգով և չափաքանակներով:

2.4. **Շահառուն պարտավոր է՝**

2.4.1. Ծրագրի շրջանակներում նույն նպատակի համար չօգտվել գյուղատնտեսական ոլորտում իրականացվող պետական օժանդակության այլ ծրագրերից, իսկ յուրաքանչյուր շահառու կարող է ստանալ միայն մեկ միավոր խեցգետնաբուծական համալիրի համար նախատեսված ծախսերի փոխհատուցում,

2.4.2. Պայմանագիրը կնքելու պահից համալիրն առավելագույնը մեկ տարվա ընթացքում հանձնել շահագործման,

2.4.3. Պայմանագիրը կնքելուց և փոխհատուցում ստանալուց հետո առնվազն հինգ տարի, նախատեսված արտադրական հզորությանը համապատասխան, բացառապես խեցգետնաբուծության նպատակով օգտագործել հիմնված խեցգետնաբուծական համալիրը,

2.4.4. Համալիրի շահագործումից հետո հինգ տարվա ընթացքում Նախարարությանն ամենամյա հաշվետվություն ներկայացնել (մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը), որը պետք է ներառի տեղեկատվություն՝ հաշվետու տարում համալիրի գործունեության, այդ թվում՝ խեցգետնի արտադրության և իրացման, ինչպես նաև ֆինանսական հոսքերի վերաբերյալ,

2.4.5. Պայմանագիրը կնքելուց հետո առնվազն 5 տարի չօտարել կառուցված համալիրը,

2.4.6. Խստորեն պահպանել Ծրագրի դրույթները,

2.4.7. Պայմանագրի դրույթները խախտելու դեպքում՝ այն հայտնաբերելու պահից սկսած եռամսյա ժամկետում փոխհատուցման գումարները և ՀՀ Կենտրոնական Բանկի Խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 9-ի N 283-Ն որոշմամբ նախատեսված՝ այդ գումարի համար հաշվարկված տոկոսների արժեքը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ չվերադարձնելու դեպքում այն կգանձվի դատական կարգով,

2.4.8. Պայմանագրով սահմանված գույքի նկատմամբ պայմանագրի գործողության ընթացքում այլ գրանցում հայցել միայն Նախարարության համաձայնությամբ:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Պայմանագրի գինը սահմանվում է ———— (նշել համալիրի տիպը՝ փոքր, միջին, խոշոր) խեցգետնաբուծական համալիրի ներդրումային ծախսերի 50 տոկոսի չափով, որը կազմում է ————— դրամ,

3.2. Ծառայության մատուցման գինը կայուն է և Շահառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը,

3.3. Նախարարությունը փոխհատուցման ենթակա գումարը, մոնիթորինգի դրական արդյունքների հիման վրա, Ծրագրով սահմանված ընթացակարգով փոխանցվում է Շահառուի հաշվարկային հաշվին անկանխիկ եղանակով:

4. Մոնիթորինգը

4.1. Նախարարությունը Ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածում կիրականացնի մոնիթորինգ: Մոնիթորինգը կանցկացնի Նախարարության համապատասխան լիազոր կազմակերպությունը՝ եռամսյա պարբերականությամբ: Մոնիթորինգի ընթացքում տեղում իրականացվող ուսումնասիրությունների արդյունքում կորոշվեն իրականացվող աշխատանքների բնույթը

և տեխնոլոգիական չափորոշիչներին դրանց համապատասխանության հանգամանքը, որոնց հիման վրա կկազմվի արձանագրություն, ինչպես նաև կարվեն եզրահանգումներ և կտրվեն ցուցումներ,

4.2. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերությունների ու բացթողումների շտկման նպատակով Շահառուին տրվում են գրավոր ցուցումներ,

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Շահառուից կարող են պահանջել գրավոր ու բանավոր պարզաբանումներ, բացատրություններ, Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով Շահառուն պարտավորվում է Ծրագրով ———— մարզի —————— համայնքի ——————— հեկտար հողատարածքի (անշարժ գույքի սեփականության իրավունքի/ գրանցման վկայական N ————— ծածկագիր՝ ————) վրա հիմնել խեցգետնաբուծարան, իսկ Նախարարությունը պարտավորվում է տրամադրել փոխհատուցում՝ Ծրագրի 26-րդ կետով սահմանված չափաքանակով,

5.2. Պայմանագրով նախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Պայմանագրի փոփոխման և լուծման կարգը

6.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել Կողմերի համաձայնությամբ՝ Ծրագրի պահանջների պահպանմամբ: Պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և Կողմերը այն չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսիք են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Վեճերի լուծման կարգը

8.1. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Այլ պայմաններ

9.1. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, 7 էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ,

9.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների ամբողջական կատարումը,

9.3. Պայմանագիրը հիմք է Պայմանագրի գործողության ընթացքում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին

կետի 4-րդ կետի համաձայն գույքի նկատմամբ օտարման սահմանափակում կիրառելու համար, ընդ որում՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից՝ հողի նկատմամբ և շահագործման համար պատրաստ լինելու պահից՝ 5 տարի՝ շենք-շինությունների նկատմամբ,

9.4. Պայմանագրով չկարգավորվող դրույթները կարգավորվում են Ծրագրով:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՇԱՀԱՌՈՒ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	
Հասցե՝	Հասցե՝
0010, ք. Երևան, Մհեր Մկրտչյան 5	
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011052538 ՀՎՀՀ 02698604 ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղար	Անձնագիր , տրվ. թ., կողմից Հեռ.+ ՀՎՀՀ ԲԱՆԿ Հ/Հ
_____	_____
(ստորագրություն) Կ. Տ.	(ստորագրություն)